

լէքսան»**) երգը նուիրուած է Մշոյ դաշտի մէկ ապստամբութեան, որ տեղի ունեցաւ ընդդէմ քիւրտերու, որոնք ամէն շաբաթի Տաւրոսի վրայով կը հասնէին Մշոյ դաշտ:

Ուրիշ օրինակ մը կարող է նկատուիլ «Մոկաց Միրզէն» երգը, որմէ կը տեղեկանանք թէ Մոկաց լեռնաշխարհը կ'ենթարկուէր ձէզիրէին: Երեւի Մոկաց Միրզէն ըմբոստ հայ իշխան մը եղած է եւ կանչուելով ձէզիրէի փաշայի կողմէ թունաւորուած ու սպաննուած է: Սակայն այդ ժամանակաշրջանի մասնակի ղեմադրութիւններու (հայերու եւ քիւրտերու միջեւ) պատմութիւնը մեզի հասած չէ:

Հոս, ուրեմն, մենք փաստական դրութիւնը արձանագրենք: 19-րդ դարու սկզբին, հայերը անտեսապէս եւ Ֆիզիքապէս ճնշուած էին քիւրտ աւատապետ փաշաներէն, եւ կը ձգտէին, առաջին հերթին ազատուիլ այդ լուծէն, որպէս դարաւոր եւ անմիջական իշխանութեանէ մը, որմէ ո'չ անտեսական, ո'չ մշակութային եւ ոչ ալ քաղաքական (միացեալ ճակատ մը թուրքին դէմ) բարիքներ կրնային ակնկալել:

**) Այդ ապստամբութեան մասին գրքոյկ մը հրատարակուած է Մշոյ Ս. Կարապետ վանքի տպարանէն եօթնասունական թուականներուն կամ աւելի առաջ. ճիշդ թուականը անձանօթ կը մնայ ինձ: Գօթախտաբար այդ գրքոյկը չունիմ տրամադրութեանս տակ, եւ չեմ կարծեր որ անոր օրինակներէն մէկը զանուի նաեւ Միւթարեաններու մօտ: Գրքոյկը կը նըկարագրէ թէ ի՛նչպէս Մշոյ դաշտի միայն երեք գիւղերը՝ Աւրան, Ալատին եւ Կէմիկ, ոտքի բարձրացած են Աւրանցի Ալեքսանի, Ալատինցի Ռամուրչատի եւ Կէմիկցիի (անունը չեմ յիշեր) մը ղեկավարութեամբ եւ կատաղի կռիւ մղած են Հազարայիներուն դէմ, որոնք բացի այլ ճնշումներէ, ամէն մէկ գիւղէն 600 զրուշ տուրք կ'առնէին: Դէպքը տեղի ունեցած է 1840-ական թուականէն առաջ: Քիւրտեր բաւական թուով սպաննուածներ տուած են, իրենց կարգին աւերելով քանի մը հայ գիւղեր: Այդ կռիւներու ընթացքին կը նահատակուին հայ ապստամբութեան երեք ղեկավարներն ալ: Անկէ յետոյ այլեւս Հազարացիք Մշոյ դաշտը չեն իջներ:

Այս ազատագրումը կարող էր դալ թուրք կառավարութեան միջամտութեամբ, որպէս ղերիշխան տիրապետողի, եւ կամ օտար պետութեանց միջամտութեամբ: Այս երկրորդ հաւանականութիւնը հայերու համար ամենէն բաղձալին էր, որովհետեւ միւսնոյն ժամանակ կ'ազատուէին թէ՛ թուրքի եւ թէ՛ քիւրտի տիրապետութենէն:

Թուրքիոյ գերիշխանութենէն ազատուելու յոյսը հայերը, այդ թուականներուն, դրած էին քրիստոնեայ պետութիւններու, գերազանցապէս Ռուսաստանի միջամտութեան վրայ: Մինչդեռ եթէ այդ բաղձանքը կ'ուշանար իրականութիւն դառնալ, հայերը, որպէս նուազագոյն շարիք, հակուած էին թրքական կառավարութեան կողմը, ու կ'ակնկալէին անկէ իրաւական իշխանութիւն մը, որ պիտի դար վերջնականօրէն վերացնել քրտական աւատապետական փաշայութիւնները: Հայերը, այդպէսով, յոյս ունէին ազատուիլ անտեսական եւ Ֆիզիքական գերութենէ, ու մտածել քաղաքական գերութենէ ազատելու մասին եւ իրենց ճիշդը ամփոփել մէկ տիրապետողի դէմ, որ պիտի հանդիսանար թուրք կառավարութիւնը:

Թուրք կառավարութեան հետ կապուած այս յոյսերու հիմնական պտածառը այն էր, որ ղերիշխող թուրք տարրը իր գէնքը մշտապէս ուղղած էր քիւրտ իշխանապետութիւններու դէմ եւ որպէս օսմանեան պետութեան աչքին փուշը՝ կը հալածէր դանոնք: Հայերը, ինչպէս տեսանք դեռ 17-րդ դարու սկզբէն իսկ, արեւմտեան շրջաններու մէջ (Էրզրում-Արաստիա) կառավարութեան յաջողութիւններու կողմնակից էին, որպէսզի ազատուէին անիշխանութիւններէ: Իսկ արեւելեան շրջանի եւ Քիւրտիստանի շրջաններու մէջ, մէկ-երկու դար հանդուրժելէ յետոյ, 19-րդ դարու հէնց սկզբէն հայերը կը գտնէին որ իրենց եւ քիւրտերու համակեցութիւնը, աւատական կարգերով, անկարելի դարձած էր: Ահա, այդ հոգեբանական վիճակին կը զուգադիպի թրքական զինուորական զօրեղ միջամտութիւնը Քիւրտիստանի դէմ: Միւսնոյն ժամանակ, այդ թրականներուն տեղի կ'ունենան շարք մը ըմբոստական ու ազատագրական բռնկումներ թէ քիւրտերու եւ թէ հայերու կողմէ: